**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2018թ. մարտի 28** **N 34-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՈՒՏ, ՆՈՐ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԴԱՎԹԱՇԵՆ, ԴՊՐԵՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2018 թվականի հունիսի 10-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Անտառուտ և Նոր Արթիկ համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ:
2. 2018 թվականի հունիսի 10-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն և Դպրևանք համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հերթական ընտրություններ:
3. 2018 թվականի հունիսի 10-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքում նշանակել և անցկացնել ավագանու անդամների հերթական ընտրություն:

**Ա.ՍԻՄՈՆՅԱՆ**